ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2022 թվականի թիվ 162 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2022թ. մայիսի 20-ի թիվ 01/3-3/9211-2022 գրությունը

ո ր ո շ ու մ ե մ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2021թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել ընկերությունների տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:

3.Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Բաբլումյանին:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

23.05.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2022 թ. մայիսի 23

ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
“ 23 ” մայիսի 2022թ
թիվ 162 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

| հ/հ | Ընկերության անվանումը | 2021թ տարեկան արդյունքներով առաջացած զուտ շահույթը / հազար դրամ/ | ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափը /հազար դրամ/ | կուտակման հիմնադրամի ստեղծում / հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Իջևանի բժշկական կենտրոն | 10513.6 | 0,0 | 10513.6 |
| 2 | Նոյեմբերյանի բժշկական կենտրոն | 2715.6 | 1357.8 | 1357.8 |
| 3 | Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն | 1839.0 | 919.5 | 919.5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 15068.2 | 2277.3 | 12790.9 |

Մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Գևորգյան